



Խմբագրատան հասցէ՝

Պէյրուզ. Նահր Իպրահիմ փ.,  
Թէքէէն Կեդրոն, 2-րդ յարկ, Ժըմմէյզի

Երեւան. Մամուլի շէնք, Հիմնական  
Մասնաշէնք, 2-րդ յարկ, 213ա,  
Արշակունեաց 2

Շաբաթ / 04.12.2021

85րդ Տարի, թիւ 19 (22,490)

1500 Լ.Ո. / 8 Էջ

@ zartonkadl@gmail.com

+961 1 444225  
+961 81 306 447

www.zartonkdaily.org  
facebook.com/zartonkdaily

P.O.BOX 11-617 Beirut-Lebanon

## Հայկական Լուրեր

### Ատրպէյճանցիք Սպաննած Են 65-ամեայ Արցախցի. Արցախի ԱԱԾ



Ատրպէյճանի զինուորականները բռնութիւն գործադրած են ու սպաննած Արցախի 65-ամեայ բնակիչը, յայտնած է Արցախի Ազգային անվտանգութեան ծառայութիւնը:

Արցախի ԱԱԾ-ն աւելի վաղ յայտնած էր, որ Մարտունիի շրջանի ճարտար քաղաքի 65-ամեայ բնակիչը մոլորուելու հետեւանքով

յայտնուած է Ատրպէյճանի զինուած ուժերու վերահսկողութեան տակ:

«Այսօր ժամը 13:00-ի սահմաններում Ատրպէյճանի զինուորականները մուտք են գործել ԱՀ Մարտունու շրջանի ճարտար քաղաքի վարչական տարածքի հարեւանութեամբ տեղակայուած չէզոք գօտի եւ բռնութիւն գործադրել նոյն քաղաքի բնակիչ, ԱՀ քաղաքացի, անասնապահութեամբ զբաղուող, 1956թ. ծնուած Սէյրան Սարգսեանի նկատմամբ, որից յետոյ նրան տեղափոխել են ատրպէյճանական յենակետ, որտեղ Ս. Սարգսեանին դիտաւորութեամբ ապօրինաբար կեանքից զրկել են», - ըսուած է տարածած հաղորդագրութեամբ:

Ըստ Արցախի ԱԱԾ-ին՝ դէպքի հանգամանքները արձանագրած են արցախեան կողմը տեղադրուած տեսախցիկները:

### Ազատագրական Շարժումը Պիտի Շարունակէ Յայտարարուած Նպատակներուն Իրագործման Նուիրուած Գործողութիւնները. Յայտարարութիւն

Ազատագրական շարժումը պիտի շարունակէ իր յայտարարած նպատակներուն իրագործման նուիրուած գործողութիւնները: Այս մասին յայտարարութիւն մը տարածած է Շարժումը Նախաձեռնող մարմինը: Յայտարարութեան մէջ նշուած է. - «2021թ. նոյեմբերի 21-ին յայտարարուել է, որ մեկնարկել է ազատագրական շարժումը, որի նպատակն է.

- կանխել սահմանագծման եւ սահմանազատման հակահայկական ծրագիրը, այդ թւում՝ պահանջելով հրապարակել ստորագրման ներկայացուած փաստաթղթերը - թոյլ չտալ միջանցք տրամադրել թշնամուն - պահանջել, որ Հայաստանի իշխանութիւնները լիարժեք զինեն առաջնագիծը և պաշտպանեն ՀՀ տարածքային ամբողջականութիւնը:

Նոյն յայտարարութեամբ նոյեմբերի 22-ին, ժամը 17:00-ին շտապ հաւաք է հրաւիրուել Երևանի Հանրապետութեան հրապարակում:

Նոյեմբերի 22-ին, 23-ին, 24-ին, 25-ին և 26-ին Երևանում տեղի են ունեցել հանրահաւաքներ և երթեր:

26.11.2021թ. ՌԴ, Հայաստանի և Ազրպէյճանի ներկայացուցիչների ստորագրած յայտարարութեան համաձայն արձանագրուել է, որ Հայաստանի



## Լիբանանեան Լուրեր

### Նախարար Ժորժ Զըրտահի Հրաժարական Տուաւ



Ինչպէս կը Նախատեսուէր, Լիբանանի տեղեկատուութեան Նախարար Ժորժ Զըրտահին երէկ հրաժարական տուաւ:

Զըրտահի հակիրճ խօսք մը արտասանելով նշեց, որ այս քայլին կը դիմէ, որպէս բարի կամեցողութեան նշան:

Ան նաեւ ըսաւ, որ յոյս ունի, որ իր հրաժարականը կ'օգնէ օրերս Սեւտական Արապիա այցելող Ֆրանսայի Նախագահ Էմանուէլ Մաքրոնին, որ կարողաւայ Լիբանանի եւ Արաբական Ծոցի երկիրներուն միջեւ առաջացած տագնապը լուծելու:

Յիշեցնելով, որ Լիբանան նեղ կացութեան ենթարկուեցաւ մասնաւորապէս Ռիատի եւ արաբական ծոցի երկիրներուն կողմէ, երբ պարզ դարձաւ, որ Զըրտահի քննադատած էր Եմմէի պատերազմը, մինչ այդ քննադատութիւնները ինչպէս են անոր Նախարար նշանակուելէն երկու ամիս առաջ:

և Ազրպէյճանի միջև ստեղծուում է սահմանազատման և սահմանագծման յանձնաժողով՝ ՌԴ խորհրդապետական օժանդակութեամբ:

Յայտարարութեան մէջ ստորագրող կողմերը հիմնուել են երեք պետութիւնների 09.11.2020թ. յայտարարութեան վրայ, որի կէտերն ի վնաս Հայաստանի խախտուած են, այն է՝ ազրպէյճանական ուժերը չեն մնացել իրենց զբաղեցրած դիրքերում, այլ առաջ են եկել իսրայէլական ուժերի զբաղեցրած ուժերի դիրքեր, ընդհուպ ներխուժել են ինքնիշխան Հայաստանի տարածք, ռազմագերիները և պատանդառուած անձինք չեն վերադարձուել հայրենիք, նոյեմբերին առաջնագծում հայորդիներ են զոհուել, իսկ սահմանազատման և սահմանագծման գործընթացը կարող է հանգեցնել Արցախի կարգավիճակի հարցի վիժեցմանը:

Նոյեմբերի 27-ին Երևանում տեղի ունեցած հանրահաւաքի ժամանակ Ազատագրական շարժումը ներկայացրել է Նիկոլ Փաշինեանի և Արմէն Սարգսեանի հրաժարականների պահանջը՝ արձանագրելով Նիկոլ Փաշինեանի պահանջը ներկայացուել է, քանի որ վերջինս ի խախտումն է ՀՀ Սահմանադրութեամբ ամրագրուած պարտականութեան 2018-2021թթ. ընթացքում չի հետևել Սահմանադրութեան պահպանմանը և չի կատարել պետութեան գլխի իր՝ համապետական և համազգային շահերի պաշտպանութեան հիմնական գործառնությունը:

Նոյեմբերի 28-ին Ազատագրական շարժման անդամներն իրականացրել են ոտքով ուխտագնացութիւն Երևան քաղաքի Հանրապետութեան հրապարակից դէպի Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին՝ յանուն ազգի համախմբման՝ առանց քաղաքական կոչերի:



## ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

# Երեւանի Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ Մայր Եկեղեցում Կատարուեց Արցախեան 44–օրեայ Պատերազմում Նահատակուած 9 Չինծառայողների Յուզարկաւորութեան Եկեղեցու Կարգը

Դեկտեմբերի 2-ին, Ն.Ս.Ս.Ս.Ս. Գարեգին Երկրորդ Ծայրագոյն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի Նախագահութեամբ, Երեւանի Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ մայր եկեղեցում կատարուեց արցախեան 44–օրեայ պատերազմում նահատակուած եւ մէկ տարի անց Հայաստանին վերադարձրած 9 զինծառայողների յուզարկաւորութեան եկեղեցու կարգը:



Արարողութեան աւարտին Ամենայն Հայոց Կաթողիկոսն իր խօսքն ուղղեց նահատակ քաջորդիների սգակիր ընտանիքներին եւ ներկաներին:



«Սիրելի բարեպաշտ ժողովուրդ, Այսօր հաւաքուել ենք Երեւանի Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ մայր եկեղեցու խնկաբոյր կամարների ներքոյ՝ դէպի յաւերժութիւն ճանապարհելու հայրենիքի պաշտպանութեան համար նահատակուած մեր քաջագուն որդիներին: Մեր խիզախ զինուորների նուիրական



մասունքների առջեւ խոնարհուած ենք բերում նրանց լուսաւոր յիշատակին, յիշում նրանց արիւթիւնն ու սիրանքները: Հրաժեշտի այս պահին վերջին անգամ արցախեան պատերազմի ողբերգական իրադարձութիւնները,



մեր ողջ պատմութեան ընթացքում մեզ պատուհասած աղետներն ու արհաւիրքները, գոտեպնդում փորձութիւններին դիմակայելու մեր ժողովրդի զաւակների զօրեղ կամքով, աննկուն տոկունութեամբ ու վճռականութեամբ:

Պատերազմից աւելի քան մէկ տարի անց, չսպիացած վերքերը մեր սրտերում, խոնարհում ենք բերում մեր ազգին արժանաւոր որդիներ պարգեւած, սնած ու դաստիարակած ծնողներին: Սուրբ Հոգու մխիթարութիւնն ենք խնդրում պատերազմում ծնող, ամուսին, զաւակ եւ կամ հարազատ կորցրած սգացեալ ընտանիքներին, որոնք անասելի ցաւ կրեցին. ցաւ ու կորուստ, որ ամենքինս է:



Սիրելիներ, հայրենիքին իր կեանքն ընծայաբերած անձը միշտ անմահ է, միշտ յաղթանակող է: Ռազմի դաշտում մեր սիրեցեալ զաւակները ուժ առան, զօրացան Վարդանանց հերոսամարտի՝ «Մահ ոչ իմացեալ՝ մահ է, մահ իմացեալ՝ անմահութիւն» Է կարգախօսով: Այդ ոգով ու գիտակցութեամբ նրանք վկայեցին իրենց սերն ու նուիրումը առ հայրենին եւ իրենց հեղած արեամբ նուիրագործեցին որդիական հաւատարմութիւնն ու նախանձախնդրութիւնը հանդէպ հարազատ ժողովուրդն ու արժեքները: Մեր քաջարի



զինուորների անօրինակ սիրագործութիւնները արձանագրուած են մեր նորօրեայ պատմութեան էջերում եւ ոգեշնչող պիտի լինեն ապագայ սերունդների համար՝ ապրելու առ Աստուած, առ ազգն ու հայրենին նոյն սիրով ու նուիրումով:

Մենք ամենքս պարտք ունենք մեր նահատակ հերոսների հանդէպ, ովքեր, համաձայն պատմահայր Խորենացու խօսքերի, «մահկանացու ծնուելով անմահ յիշատակ թողեցին»:

Մենք ամենքս պարտք ունենք նրանց անմահ յիշատակի առջեւ՝ իրագործելու նրանց երազները, ապահով, շէն ու բարօր դարձնելու Հայաստան եւ Արցախ հայրենի մեր երկիրը, որի պաշտպանութեան համար նրանք իրենց կեանքն ընծայեցին:



Մենք հաւատում ենք, որ մեր սիրելի զաւակները երկնքում պիտի արժանանան Տիրոջ տեսութեանը, երկնային լոյսերի ու փառքի մէջ յաւիտեան



**Պատմութեան  
Մէջ Այսօր**

**Ռուբէն Նաքեան**

Ռուբէն Գեորգ Նաքեան (անգլերէն՝ Reuben Nakian, 10 Օգոստոս, 1897, Նիւ Եորք, Ամերիկայի Միացեալ Մահանգներ – 4 Դեկտեմբեր, 1986, Սթամֆորտ, Զնեքթիքուլ), քանդակագործ:

1912-1915-ին՝ սորված է Նիւ Եորքի Ազատ արուեստներու դպրոցին մէջ, Գեղեցիկ արուեստներու ակադեմիոյ մէջ:

Սկզբնական շրջանին ստեղծած է անիմալիստական գործեր:

1930 թուականին մասնակցած է «33 մոդեռնիստներ» ցուցահանդէսին: Մէկ տարի ետք հանդիպած է Արշիլ Կորքիին, որ մեծ ազդեցութիւն ձգած է Նաքեանի գեղագիտական սկզբունքներու կողմնորոշման եւ հաստատման վրայ:

Ստեղծած է անուանի արուեստագետներու եւ քաղաքական գործիչներու դիմաքանդակներ, Աստուածաշունչի եւ դիցաբանական թեմաներով յորինուածքներ:

ապրելու երանութեանը, եւ նրանց համար պիտի հնչի մեր Փրկչի՝ Յիսուս Զրիստոսի խօսքը. «Եկէ՛ք, իմ Հօր օրինեալներ, ժառանգեցէ՛ք աշխարհի սկզբից ձեզ համար պատրաստուած արքայութիւնը» (Մատթ. 25.34):

Աղօթական այս պահին, սիրելիներ, ի խորոց սրտի հայցենք Ողորմած Տիրոջը, որ հանգստութիւն ու խաղաղութիւն պարգեւի իր հաւատարիմ ծառաների՝ հոգիներին եւ մխիթարութիւն ու սփոփանք՝ նրանց ծնողներին, հարազատներին ու մերձաւորներին: Հայցենք, որ մեր երկրի համար դժուարին այս ժամանակներում զօրացնի մեր ժողովրդին յոյսով, հաւատով ու սիրով՝ ծանր փորձութեանը համբերութեամբ եւ տոկունութեամբ դիմակայելու, ցաւն ու նեղութիւնները քաջաբար յաղթահարելու եւ ամէն ջանք ներդնելու մեր հայրենիքի պաշտպանութեան եւ զօրացման կենսական առաքելութեան մէջ:

Թող երկնաւոր Տէրը իր Սուրբ Աջի ամենախնամ հովանու ներքոյ ապահով ու անվտանգ պահի Հայոց բանակի քաջագուն զօրականներին եւ հայրենաբնակ ու աշխարհասփիւռ մեր ողջ ժողովրդին:

Հանգչէ՛ք խաղաղութեամբ անմահ նահատակներ, մեր ժողովրդի սիրելի զաւակներ:

Խու՜նկ, աղօթք եւ օրհնութիւն անմահացած մեր զինուորների լուսաւոր յիշատակին, այսօր եւ միշտ եւ յաւիտեանս. ամեն»:



## Ամերիկեան Բարքեր

**ԳԵՈՐԳ ԶԵՕՇԿԵՐԵԱՆ**  
**«Չարթօնք»-ի Երեց Աշխատակից**

**Ինչո՞ւ Աշխատիլ . . .**

Պատկածե՛լ ժաիրի համաճարակին պատճառաւ՝ շատ մը գործատեղիներ, ճաշարաններ, սինեմաներ, մարզական աւաններ եւ այլն ժամանակաւոր կերպով փակուեցան եւ անոնց գործաւորները անգործութեան դատապարտուեցան:


Այդ գործաւորները՝ ըստ ամերիկեան օրէնքի տրամադրութեան, դիմեցին կառավարութեան օգնութեան համար: Կառավարութիւնը անոնց վճարեց թոշակ (unemployment benefits) մինչեւ որ անոնք վերադառնան գործի: Սակայն եկուր տես որ կառավարութեան վճարած թոշակը շատ աւելի է, քան իրենց գործատեղիէն ստացած աշխատավարձը: Ուրեմն ինչո՞ւ գործի երթալ, երբ տունը մնալով շատ աւելի դրամ կ'ստանան, չէ՞ . . . Եւ այսպէսով՝ ժողովուրդը ծովութեան վարժուեցաւ:

Օրինակ մը տալու համար անգործներուն ստացած տարեկան գումարներէն, հետեւեցե՛ք հետեւեալ աղիւսակին՝ որ ցոյց կու տայ զանոնք, ըստ նահանգներուն տրամադրութեան:

Ստորեւ՝ 34 նահանգներէն մի քանի օրինակ, առաջնահերթութեան շարքով:

| Նահանգ                  | Տարեկան Օգնութիւն |
|-------------------------|-------------------|
| 1. Զաուաի               | 60,590            |
| 3. Մետչուսեց            | 50,540            |
| 5. Նիւ Եորք             | 43,700            |
| 17. Գալիֆորնիա          | 37,160            |
| 34. Զարաւային Գարոլայնա | 21,910            |

Եւ այս ծովութեան երեսէն՝ ամէն տեղ գործաւորի պակաս կայ: Դիտեցե՛ք կցուած նկարը, որ կը ներկայացնէ Լոս Անճելըսի նաւահանգիստը: Նաւէն իջած ապրանքները դիզուած են, որոնք կը կարօտին բեռնատար ինքնաշարժներու վարիչներու՝ որպէսզի այդ ապրանքները փոխադրուին շուկայ եւ մատչելի դառնան բնակչութեան:



Այս մէկ երեսն է միայն գործաւորներու կարիքին: Անդին՝ Ամազոնի հսկայ ընկերութիւնը կը յայտարարէ որ պատրաստ է ժամական 18 տոլար վճարելու անոնց որոնք կ'ուզեն միանալ իր աշխատաւորներու ցանցին: Սա քիչ դրամ չէ, եթէ նկատի առնենք որ Գալիֆորնիոյ պաշտօնական աշխատավարձը ժամական 14 տոլար է . . .

**Վասն Բազմազանութեան . . .**

Միացեալ Նահանգներու մէջ՝ բնութագրական օրէնքը կը պահանջէ որ գործատեղիներու, գրասենեակներու, ճաշարաններու եւ պետական պաշտօնատեղիներու մէջ՝ բազմազանութիւնը (diversity) տիրէ: Այսինքն, աշխատողներուն որոշ մէկ մասնիկը պէտք է բաղկանայ փոքրամասնութիւններէ:

Այսքանը հասկնալի է եւ արդար, սակայն երբեմն բազմազանութեան սիրոյն՝ գործատերեր աւելի յառաջ կ'երթան եւ ի նպաստ փոքրամասնութիւններու առուած որոշումները կը վնասեն մեծամասնութեան միաւորները: Զիմա խօսիմք օրինակներով:

Շիքագոյի մէջ՝ արուեստի թանգարան մը ունէր 122 փորձառու կամաւորներու խումբ մը, որոնք օգտակար կը հանդիսանային այցելուներուն, անոնց ներկայացնելով թանգարանի 300,000 արուեստի գործերը:

Այս խումբը բազմազանութիւն չներկայացնէր ըսելով՝ զանոնք գործէ հանած են եւ իրենց տեղը վարձած են բազմազանութիւն ներկայացնող խումբ մը, որոնց կը վճարեն ժամական 25 տոլար:

Առ քեզի օրէնքի ենթարկուելուն հետեւանքները, որ նիւթական պարտաւորութեանց տակ կը թողու վերոյիշեալ թանգարանը . . . Այս օրէնքը համատարած է եւ անոր պէտք է ենթարկուին բոլոր հաստատութիւնները՝ ըլլան անոնք պետական թէ անհատական:

Յաճախ կը պատահի որ վերոյիշեալ օրէնքին ենթարկուելու համար՝ հաստատութիւններ կը վարձեն պաշտօնակատարներ, որոնք շատ ալ որակաւոր չեն, բայց դժբախտաբար այս է իրականութիւնը եւ մենք պէտք է կամայ-ակամայ հաշտուինք եւ հանդուրժենք ու վերջ:

«Չարթօնք» Զայրենիքի Մէջ – 67 -

## Զայաստանի Զամար Պատերազմն Աւարտուած ԶԵ. Պէտք Է Պատրաստուել Ու Հասարակութեանը Դուրս Բերել Յուսահատական Վիճակից Չրոյց Նորակազմ «Ազգային Լեգէոն» ՀԿ-ի Պատասխանատուներուն Հետ

**ՔՐԻՍԹԻՆԱ ԱՐԱՆԱՐԵԱՆ**

**«Չարթօնք»-ի Երեւանի Աշխատակից**

2020 թուականի հայ-ազրպէյճանական 44-օրեայ պատերազմը շատերիս կեանքում խոր հետքեր ու վերքեր թողեց. կորուստներ, ցաւ, բարոյալքում, յուսահատութիւն, անկարողութեան զգացում... Պատերազմը նաեւ ի ցոյց դրեց մեր ազգային ու պետական բացթողումները, այդ թւում՝ հայկական բանակում առկայ արատաւոր երեւոյթները, ինչքան էլ ցաւալի է դա խոստովանել: Սակայն, իւրաքանչիւր հասարակութիւն, պետութիւն կարող է նման ծանր հարուածից յետոյ ոտքի կանգնել միայն միասնական ու ամուր կամքով, կազմակերպուած ու նուիրեալ աշխատանքով, ազգի բոլոր կարողութիւնների գերաբարձրումով ու կեդրոնացումով: Եթէ հասարակութեան բոլոր անդամները զբաղուեն իրենց մասնագիտական աշխատանքով, վստահաբար հնարաւոր կը լինի անգամ նման ծանր հարուածներից յետոյ ոտքի կանգնել: Վառ օրինակ է Գերմանիայի եւ Ճապոնիայի թռիչքածեւ զարգացումը երկրորդ աշխարհամարտի անձնատրուութիւնից ընդամենը մէկ տասնամեակ անց:

Հայրութեան համար պատերազմն աւարտուած չէ, տանուլ ենք տուել պատերազմի ընդամենը մէկ փուլը: Արցախի Հանրապետութեան տարածքի մեծ մասի կորուստն ու Հայաստանի Հանրապետութեան ինքնիշխանութեան կորստի վտանգը մեզ համար պէտք է ահագանգ լինի միաւորուելու ու անցեալի սխալներից դասեր քաղելու: Այդ գործում մեծ ներդրում կարող են ունենալ հասարակութեան հոգեբանական վերափոխումը, բարոյական վերազարթօնը, պատերազմի գալիք փուլին համակողմանի պատրաստութիւնը, քանի մեր երկիրը ունի թշնամի ու ցեղասպան հարեւաններ, որոնք չեն թաքցնում հայութիւնն իր իսկ հայրենիքում վերացնելու իրենց գերնպատակը:

«Ազգային Լեգէոն» ուսումնամարզական հասարակական կազմակերպութիւնը (այսուհետ՝ ՀԿ) ստեղծվել է հենց հասարակութեան հայրենասիրական ոգին բարձրացնելու եւ աւագ սերնդի ուսումնամարզական ու ռազմագիտական փորձը նոր սերնդին փոխանցելու նպատակով: Հիմնադիրները հայրենասէր հայորդիներ են, ովքեր մասնակցել են երեք տասնամեակ առաջ սկսուած արցախեան շարժումին ու պատերազմին, եղել են մարտի դաշտում, տեսել հայկական զինուժի թերութիւններն ու բացթողումները, ինչպէս նաեւ մեր զինուորների հերոսական սիրանքները:

Արցախեան պատերազմի բոլոր փուլերի մասնակից, 90-ականներին ձեւաւորուած «Ազգային Լեգէոն» ջոկատի հրամանատար, պահեստազօրի փոխգնդապետ ԼԵՆՈՆ ԳԵՈՐԳԵԱՆԸ «Չարթօնք»-ի հետ զրոյցում մեծ խանդավառութեամբ ու սիրով էր պատմում մօտ մէկ տարի առաջ հիմնուած հասարակական կազմակերպութեան մասին: «Ազգային Լեգէոն» ՀԿ-ն ստեղծուել է 13-45 տարեկան հայ տղաներին ու աղջիկներին ուսումնամարզական ռազմահայրենասիրական դաստիարակութիւն տալու նպատակով: Այստեղ երեխաներն ու մեծահասակները ստանում են թէ՛ տեսական եւ թէ՛ գործնական գիտելիքներ ռազմական գործից ու նրան անմիջականօրէն առնչուած ոլորտներից: ՀԿ-ն գործունէութեան համար ընտրել է 4 հիմնական ուղղութիւն՝

• ֆիզիկական մարզում, ձեռնամարտ





**Լիբանանահայ Դպրոց**

## Պաշտոնական Գործընկեր Ֆրանսական Louis Casimir Teyssier Լիսեին Տնօրենը Այցելեց Մեսրոպեան Վարժարան

Նոյեմբեր 30, 2021-ին Հայ կաթողիկե Մեսրոպեան բարձրագույն վարժարան այցելեց Ֆրանսայի Պիթերկրամասի առաջատար կրթական հաստատություններէ Lycée Louis Casimir Teyssier-ի տնօրեն պարոն Փաթրիք Տիւկան, իր ղեկավարած վարժարանին եւ Մեսրոպեանի միջեւ կնքուած գործընկերութեան պաշտոնական համաձայնագիրին ստորագրութեան առիթով, որ տեղի ունեցաւ Պէյրութի Ֆրանսական Ինսթիտուտին մէջ:



Պարոն Տիւկան եւ Մեսրոպեանի տնօրեն պարոն Կրէկուար Գալուստ, շարունակելով նախապէս առջանց կայացած հանդիպումները, արծարծեցին երկու դպրոցներու համագործակցութեան վերաբերող գաղա-



փարներ՝ ստորագրուած համաձայնագիրի լոյսին տակ: Այս առիթով, Ֆրանսացի գործընկերը երկար շրջայց մը կատարեց Մեսրոպեանի զանազան բաժանմունքներ եւ մօտէն ծանօթացաւ իւրաքանչիւրին աշխատանքին:



Նշեալ համաձայնագիրը պայմաններ կը ստեղծէ, որ դասընկերական ուղղակի կապեր հաստատուին երկու դպրոցներու աշակերտներուն միջեւ, ինչպէս նաեւ կազմակերպուին փոխադարձ այցելութիւններ: Անկապիտի նպաստէ նաեւ աշակերտներու, ուսուցիչներու եւ վարչական պատասխանատուներու միջեւ զաղափարներու եւ փորձառութեան փոխանակումին: Սոյն համաձայնագիրը յաջորդեց եւ



արդիւնքներէ մէկն է Մեսրոպեան վարժարանի՝ Label-FrancEducation միջազգային հաւատարմագրումին, որ տեղի ունեցաւ այս տարուան 27 Հոկտեմբերին: Label-FrancEducation-ը կը համարուի որակի կնիք մը՝ ֆրանսերէնի դպրոցական ուսուցման մարզին մէջ, համաշխարհային մակարդակի վրայ: Ներկայիս, Լիբանանի մէջ 30 դպրոցներ ունին այս հաւատարմագիրը, ամբողջ աշխարհի մէջ՝ 523. Մեսրոպեանը միակ հայկական դպրոցն է անոնց շարքին:



Երեկոյեան, պարոն Փաթրիք Տիւկան մասնակցեցաւ Մեսրոպեանի շրջափակին մէջ Սուրբ Ծննդեան տօնածառի լուսաւորման արարողութեան



եւ այդ առիթով իր խօսքը ուղղեց ներկաներուն:

### Տեղեկատուական գրասենեակ Հայ Կաթողիկե Մեսրոպեան Բարձրագույն Վարժարանի



## Լուսաւորուեցաւ Սուրբ Ծննդեան Տօնածառը Մեսրոպեանի Շրջափակին Մէջ

30 Նոյեմբեր 2021-ի երեկոյեան Մեսրոպեանի շրջափակին մէջ տեղի ունեցաւ Սուրբ Ծննդեան մեծ տօնածառի լուսաւորման արարողութիւնը, որ նշեց իւրաքանչիւր մուտք մը Սուրբ Տօներուն, մասնակիցներուն քով արծարծելով այն բոլոր գեղեցիկ եւ ոգեւորող ապրումները, որոնք կը զուգակցուին մեր Փրկիչին Ծնունդին եւ Յայտնութեան: Արարողութիւնը գլխաւորեցին



Մեսրոպեանի տնօրեն պարոն Կրէկուար Գալուստ եւ Ֆրանսայի Պիթերկրամասի Lycée Louis Casimir Teyssier-ի տնօրեն պարոն Փաթրիք

Տիւկան, որ աշխատանքային այցելութեամբ մը կը գտնուէր Մեսրոպեան, երկու դպրոցներուն միջեւ կնքուած գործընկերութեան պաշտոնական համաձայնագիրին ստորագրութեան առիթով: Ներկայ էին Ս. Փրկիչ եկեղեցւոյ ժողովրդապետ Հայր Խաչիկ վրդ. Գոյումճեան, փոխ-ժողովրդապետեր հայր Տիգրան եւ հայր Վարդան, Մեսրոպեանի բարձր կարգի դասարաններու աշակերտներ,

ուսուցիչներ եւ ծնողներ: Արարողութիւնը սկսաւ Ս. Փրկիչ եկեղեցւոյ փողերախումբին կատարումով, որուն, գեղարուեստական մասով, յաջորդեցին Մեսրոպեանի աշակերտներուն նուագներն ու երգերը, նուիրուած Սուրբ Ծննդեան: Խօսք առին պարոն Փաթրիք Տիւկան եւ պարոն Կրէկուար Գալուստ, միասնաբար կատարելէն ետք տօնածառին լուսաւորումը:

Շաբ. էջ 05



Լիբանանահայ Դպրոց

# ԼՈՒՍԱԼՈՐԻՆԵՑԿԱԼ ՍՈՒՐԲ ԾՆՆՈՒՄԻ ՏՈՆԱԾԱՌԸ ՄԵՐՈՎԱԵԱՆԻ ՇՐՋԱՓԱԿԻՆ ՄԷՋ

Սկզբը Էջ 04



Պարոն Տիկյան ըսաւ, որ մեծապէս ազդուած է ոչ միայն այս արարողութեամբ, այլ նաեւ այն այցելութեամբ, զոր կատարած էր Մերոպեան վարժարան, այդ օր: Ան աւելցուց, որ իր ղեկավարած վարժարանը խանդավառ է Մերո-

պեանի հետ գործակցութեան գաղափարով, ի շահ երկու դպրոցներու աշակերտներու յառաջդիմութեան:

Պարոն Կրէկուար Գալուստ դիտել տուաւ, որ տօնածառին լուսաւորումը խորհրդանշէ մըն է այն յոյսին եւ հաւատքին, որ Մերոպեանի ընտանիքը ամբօրէն կը պահէ իր մէջ, արիաբար դիմագրաւելու



ներկայ դժուարին պայմանները եւ անխափանօրէն շարունակելու կրթութեան ճամբան: Ան ըսաւ, որ այս արարողութեամբ Մերոպեանը ընդառաջ կ'երթայ Սուրբ Ծննդեան տօնին, որուն պատգամները իրենք են որ կը լուսաւորեն մեր ճամբաները կեանքի խաւարին մէջ: Ան ողջունեց պարոն Փաթրիք Տիկյանի ներկայութիւնը եւ



վատաւեցուց, որ նման հոգեպարար պահու մը մէջ նուիրականացած բարեկամութիւնը պիտի ըլլայ մշտական, լուսաւորելով ֆրանսացի եւ լիբանանահայ աշակերտներուն ուսման ճանապարհները:

**Տեղեկատուական գրասենեակ  
Հայ Կաթողիկէ Մերոպեան  
Բարձրագոյն Վարժարանի**





«Զարթոնք» Հայրենիքի ՄԷՋ – 67 -

## Հայաստանի Համար Պատերազմն Աւարտուած ԶԵ....

### Սկիզբը Էջ 03

- գիտելիքներ զենքերի մասին, զենքերի հաւաքում, քանդում եւ այլն, հրաձգութիւն-նշանառութիւն տարբեր զենքերով
- Առաջին բուժօգնութիւն
- Բարոյահոգեբանական պատրաստութիւն, Հայրենիքի համար սեփական կեանքն իսկ զոհաբերելու գաղափարախօսութեան սերմանում:



«Ազգային լեգեոն»-ն այսօր ունի մինչեւ 18 տարեկան 35 սան, 18-ից բարձր՝ 36, որոնք սովորում են թէ՛ տեսական գիտելիքներ, թէ՛ մասնակցում են մարզումների դաշտային, անտառային, լեռնային եւ բնական այլ տեղանքներում: Նրանք դաստիարակւում են ամենածանր իրավիճակներում տոկայու եւ ինքնապահպանուելու բազմաբնոյթ տեղեկոյթով եւ դրանք գործնականում

փորձարկում են ու կիրառում: Սովորում են նաեւ քարտիսագիտութիւն, հետախուզութիւն, ականների տեղադրում, տեղանքում թաքնուելու հմտութիւններ եւ այլն: Սաների 1/3 մասը աղջիկներ են, ովքեր մեծ ոգեւորութեամբ են մասնակցում յատկապէս դաշտային մարզումներին եւ նշանառութեան պարապմունքներին: Իսկ ապագայ զինուորները ստանում են այնպիսի գիտելիքներ ու փորձ, որոնք նրանց օգտակար կը լինեն ՀՀ զինուած ուժերում հետագայ ծառայութեան ժամանակ:



ՀԿ-ի հիմնադիր ԼԵՆՈՆ Գեորգեանն ասում է՝ բացի այն նպատակներից, որոնք իրենց առջեւ ի սկզբանէ դրել են, նաեւ նպատակ ունեն երեխաներին, այսպէս ասած, փողոցից կտրել, ապագայ զինուորներին պատրաստել բնական համար, որպէսզի գորակոչուելուց յետոյ

իրենց համար դժուար չլինի յարմարուելն ու ծառայելը, պատերազմական իրավիճակում ինքնակազմակերպուելը: Իսկ մեծահասակների դէպքում նպատակը պատերազմի մասնակիցների փորձի ու ներուժի փոխանցումն է նրանց:

«44-օրյա պատերազմի ժամանակ մարտի դաշտում շատ բան տեսայ: Շատերը անգամ չէին կարողանում զենք քանդել ու հաւաքել: Զգիտեին՝ ինչպէս պաշտպանուել անօդաչու թռչող սարքերից եւ մնացած վտանգներից: Մենք այս ամենը, եթէ լաւ իմանայինք, վստահ եմ՝ պատերազմի ելքը սա չէր լինի», - ցաւով նշում է պահեստագործի փոխգնդապետը:

«Ազգային լեգեոն»-ի համա-հիմնադիր, պատմաբան Գեորգ Եազըճեանը ուսումնամարզական ՀԿ-ում երեխաների եւ մեծահասակների հետ հիմնա-կանում խօսում է հայոց պատմութիւնից: Նա շեշտադրում է հայոց ռազմուժի պատմութիւնը, երեխաներին բացատրում մեր յաղթանակների եւ պարտութիւնների գործօնները, վերլուծում դրանք: Ներկայացնում է նաեւ ուրիշ ժողովուրդների, այդ շարքում՝ թրքական հանրոյթների ռազմական պատմութեան դրուագներ: Սոյն դասաւանդութիւնը դասական իմաստով դասախօսութիւններ չեն, այլ՝ իրար հետ բացախօսութիւն-գրոյցներ:

«Երեխաները բաւական լաւ տիրապետում են հայոց պատմութեանը, նրանք շատ ժամանակ ինձ լրացնում են: Ինձ դա շատ է ուրախացնում: Եզրակացրել եմ, որ դպրոցում լաւ դաստիարակութիւն ու գիտելիքներ են ստանում: Ու մի բան էլ ես եմ անելացնում: Շնորհակալ եմ իրենց ուսուցիչներին, յատկապէս հայագիտական առարկաների, որ մեր պատմութեան մասին լուրջ գիտելիքներ են տալիս ու հայրենասիրութեան գաղափարը սերմանում նրանց հոգու



խորքում», - ասաց մեր զրուցակիցը: Նրա խօսքով՝ 44-օրյա պատերազմից յետոյ այդ երեխաների վրայ էլ են ազդել պարտուողական ու յուսահատական տրամադրութիւնները, սակայն իրենք ամեն ինչ անում են, որ այդ զգացողութիւնները փոխարինուեն տոկայու, պայքարելու ու յաղթանակելու աներեր հաւատքով, որի համար վկայակոչում-բացատրում-վերլուծում են մեր փառաւոր յաղթանակները հազարամեակների ընթացքում:

«Պէտք է դուրս գալ նման վիճակից, մենք շրջապատուած ենք թշնամիներով, որոնց կողքին պարտաւոր ենք գոյատեւել: Մենք չենք կարող մեր հայրենիքը փոխել: Հայաստանն է մեր հայրենիքը, միակ հայրենիքը, եւ մենք պէտք է պաշտպանենք նրան՝ ամեն գնով», - իր խօսքը եզրափակեց Գեորգ Եազըճեանը:

Ուսումնամարզական ՀԿ-ն այս պահին գործում է Մասիս քաղաքի եւ նրա մերձակայ Սիս գիւղի դպրոցներում: Օգտուում են նաեւ երեւանամերձ վայրում տեղակայուած հրաձգարան-մարզումների կենտրոնից ու նրա մասնագետ հրահանգիչների հմտութիւններից:



Յոյս ունեն՝ Երեւանում եւս կը կարողանան գործունեութեան վայր ունենալ առաջիկայում: Դժուարութիւններ, անխօս, ունեն, բայց նախընտրում են չխօսել այդ մասին:

Օժանդակութիւն ստանում են իրենց սփիւռքահայ ընկերներից ու բարեկամներից, ազգակիցներից եւս ունեն որոշակի աջակցութիւն: Ռազմական գործին անհրաժեշտ պիտոյք, հանդերձանք եւ տարբեր նպաստներ ստանում են Մոսկուայում, Գանատայում եւ Լիբանանում գտնուող համակիրներից: ՀԿ-ի ղեկավարութիւնը առանձնապէս շնորհակալ է «Ազգային լեգեոնի» կամաւորական ջոկատի կազմում 44-օրեայ պատերազմին մասնակցելու համար Մոնթրէալից կամաւոր եկած նախկին

լիբանանահայ Վիգէն Տարագճեանին, ով գաղթօջախում նախաձեռնել փոխարէն» հանգանակութիւնը. մեր

լիբանանահայ Վիգէն Տարագճեանին, ով գաղթօջախում նախաձեռնել փոխարէն» հանգանակութիւնը. մեր իրենց սփիւռքահայ ընկերներից ու բարեկամներից, ազգակիցներից եւս ունեն որոշակի աջակցութիւն: Ռազմական գործին անհրաժեշտ պիտոյք, հանդերձանք եւ տարբեր նպաստներ ստանում են Մոսկուայում, Գանատայում եւ Լիբանանում գտնուող համակիրներից: ՀԿ-ի ղեկավարութիւնը առանձնապէս շնորհակալ է «Ազգային լեգեոնի» կամաւորական ջոկատի կազմում 44-օրեայ պատերազմին մասնակցելու համար Մոնթրէալից կամաւոր եկած նախկին

«Ազգային լեգեոն» ՀԿ-ում սովորելն անվճար է: Բոլորին յատկացւում են զինուորական հագուստ եւ անհրաժեշտ այլ պարագաներ: Մեր զրուցակիցը նշեց, որ ՀԿ-ի գլխաւոր խնդիրը զինուորական հագուստի, վրանների, քնապարկերի, ճոքաւոր կօշիկների, հեռադիտակների եւ նման այլ իրերի պակասն է:





## Կանխագուշակ Գրողներ

### ՊԻԱՆՔԱ ՍԱՐԸԱՍԼԱՆ

Այն տարիներուն, երբ արհեստական բանականութիւնը նոյնիսկ չէինք կրնար կռահել, միայն երեք հոգի գիտէին համացանցային իրականութեան մասին, ուրեմն կը նշանակէ, թէ «I, Robot» կամ «Neuromancer» գիրքերու հեղինակները իսկապէս եղան կանխատեսներ, գուշակեցին ապագան:

Գիտա-երեւակայութիւն (science fiction). մօտաւոր կամ հեռաւոր ապագայի մասին պատմութիւններու ստեղծումն է՝ օգտագործելով գիտութեան եւ փորձագիտութեան տարրերը, որոնք այդ ժամանակ հնարաւոր չէին: Գիտա-երեւակայական ստեղծագործութիւններու առանձնայատկութիւնը այն է, որ դէպքերը հիմնուած են գիտական ենթադրութիւններու վրայ: Այս ժանրի գրականութիւնը մեզի կը ներկայացնէ ո՛չ թէ հեռաւոր եւ անհաւանական աշխարհները, այլ այն աշխարհը, ուր մենք կ'ապրինք: Ան կը քողագործէ այն, ինչ որ մենք չենք կրնար տեսնել, խոշորացոյցի մը պէս կը մեծցնէ եւ տեսանելի կը դարձնէ: Այս ժանրի նպատակը ապագան կանխատեսելն է, այլ՝ կանխատեսել, թէ ի՞նչ պիտի ըլլայ ապագային: Անոր մտահոգութիւնը ո՛չ թէ ապագայի հետեւողական կանխատեսումն է, այլ՝ այդ ժամանակաշրջանի խնդիրները յաղթահարելը: Ան կ'օգտագործէ հնարաւորը այնքան, որքան գիտութիւնը թոյլ կու տայ եւ գիտա-երեւակայական գրականութիւնը իրապաշտութեամբ սահմանափակուած ենթադրութիւն է:

Գիտա-երեւակայական գիրքերու մէջ կը հանդիպինք ապագայի մասին զարմանալի կանխատեսումներու: Օրինակ՝ ճանրըն Սուփֆի կողմէ 1726 թուականին գրի առնուած «Կուլիվերի ճանապարհորդութիւնները»-ին մէջ Լափոթա կղզիի աստղագետները կը հասկնան, որ Զրատը ունի երկու արբանեակ: 1877 թուականին պարզուեցաւ, որ Զրատը իսկապէս ունի երկու արբանեակ:

Վարկային քարտերու (credit card) յայտնուելէն 63 տարի առաջ՝ 1888 թուականին, Էտուարտ Պելամի «Նայելով անցեալին» վեպի գլխաւոր հերոսը 2000 թուականին կ'արթննայ եւ ականատես կ'ըլլայ դրամի փոխարէն վարկային քարտերու օգտագործման:

Յ. Կ. Ուելս իր ստեղծագործութիւններէն մէկուն մէջ նկարագրած հրասայլը առաջին անգամ կ'օգտագործուի Առաջին համաշխարհային պատերազմին: Իսկ 1903 թուականին, իր կողմէ կնքուած հիվեական ռուբը, ցաւօք սրտի, կը պայթի Զիրոշիմայի վրայ՝ 1945 թուականին: Զեդինակը, որու որոշ երկրպագուներ կը պնդեն, թէ ան «Ժամանակի ճամբորդ» է, կանխատեսած է նաեւ հեռախօսային հաղորդագրութիւնները՝ 1924 թուականին իր գրած «Մարդիկ աստուածներու նման» գիրքին մէջ: Զարկ է նշել, որ հեռախօսային հաղորդագրութիւններ տարածում գտած են 1980-ական թուականներուն:



Հիւլօ Կերնսպաք իր հեղինակած հատորներէն մէկուն մէջ, 1914 թուականին, նշած է ռատարի մասին՝ անոր օգտագործումէն 24 տարի առաջ, իսկ արեւային ուժանիւթով աշխատող մեքենաները՝ 67 տարի առաջ:

Օլտուս Զոքսլիի «Չքնաղ նոր աշխարհ»-ին մէջ ընկճուածութեան դէմ դեղորայքի օգտագործումը կը կանխատեսէ՝ 18 տարի, իսկ ծինական ճարտարագիտութիւնը՝ 40 տարի առաջ:

Արթուր Բ. Բլարքի «2001: Տիեզերական ողիսական» վեպին մէջ կը ներկայացուի սարք մը, որ կը կոչուի «newspad», որ ճշգրտօրէն կը նկարագրէ «iPad»-ը:

Ճոն Պրուների «Կանգնիլ Չանգիպարի վրայ»-ն հեռատեսութեան առումով գերիվեր է միւսներէն: Պրուներ մօտաւորապէս յիսուն տարի առաջ ըսաւ, որ «Honda»-ն, որ այդ տարիներուն միայն կ'արտադրէր շարժակաւոր հեծանիւ եւ փիքափ ինքնաշարժներ, պիտի արտադրէ ելեկտրական ինքնաշարժներ, ելեկտրոնային երաժշտութիւնը պիտի դառնայ հանրաճանաչ, ամուսնութեան փոխարէն կենակցութիւնը պիտի տարածուի, Եւրոմիութիւնը պիտի հիմնուի եւ պիտի գործածուի հասարակաց դրամանիշ, զինեալ յարձակումներ պիտի ըլլան դպրոցներու եւ հասարակական շէնքերու մէջ, Միացեալ Նահանգներու մէջ զինները պիտի աճին վեցապատիկ, յիսուն տարի յետոյ ԱՄՆ-ի միակ մրցակիցը պիտի ըլլայ Չինաստանը... Ան նաեւ կանխատեսեց, որ աշխարհի բնակչութիւնը 2010 թուականին կը հասնի եօթ միլիարդի: Բաւարար չէ՝ Գիրքի մէջ կայ նաեւ ազդեցիկ առաջնորդ մը՝ «Նախագահ Օպոմի» անունով:

Ուիլիմ Կիպսընի «Neuromancer» վեպը յստակ արտայայտեց այսօրուայ համացանցային աշխարհը եւ «հեքըր»-ները:

Այգէք Ասիմով «Future fantastic» (1989) վերնագրով իր յօդուածին մէջ գրած է, որ 2000-ականներուն մարդիկ իրենց ժամանակի մեծ մասը պիտի անցընեն համակարգիչի դիմաց եւ անոնց միջոցաւ պիտի կարենան հասնիլ ամէն տեսակ տեղեկատուութեան:

Եւ տակաւին կարելի է թուարկել բազմաթիւ նման գիրքեր, որոնց հիման վրայ նկարահանուած են ժապաւեններ: Այսպէսով աւելի հասկնալի կը դառնայ, թէ ինչո՞ւ ընտրած են «Կանխագուշակ գրողներ» խորագիրը՝ ներկայացնելու համար այն հեղինակները, որոնք իրենց երեւակայութեամբ կռահած են ապագան...

### ԲԱՆ ՈՒ ԳԻՐ

Սարն ի՞նչ գիտէ՝  
Տուժն ինչ է,  
Չշտապողը՝  
Ուշն ինչ է:  
Թէ դատարկ է  
Անցեալը,  
Ի՞նչ իմանաս՝  
Յուշն ինչ է:

ՊԱՐՈՅՐ ՍԵԻԱԿ



### ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՕՐԱՅՈՅՑ

04 2021  
ԴԵԿՏԵՄԲԵՐ

Կրկ Երկ Երեք Գրեք Հնգ Ուրբ Ծրք

|    |    |    |    |    |    |    |
|----|----|----|----|----|----|----|
|    |    |    | 1  | 2  | 3  | 4  |
| 5  | 6  | 7  | 8  | 9  | 10 | 11 |
| 12 | 13 | 14 | 15 | 16 | 17 | 18 |
| 19 | 20 | 21 | 22 | 23 | 24 | 25 |
| 26 | 27 | 28 | 29 | 30 | 31 |    |



ՍԵՐԿԵՅ ՓԱՐՉԱՆՈՎ  
(1924 – 1990)

«խորհրդաւոր ընթերց»

### ՆՈՒԻՐԱՏՈՒՈՒԹԻՒՆ

Գեորգ Սալիպեանի մահուան տխուր առիթով ՏԵՐ ԵՆ Տիկին Գաբրիել Չեմպերճեան \$50 ամ. տոլար կը նուիրեն ԶԱՐԹՈՆԵ-ին:

Մշակութային Արձագանգ

# Նոր Հրատարակություններ

## Պատրաստեց ԳԵՈՐԳ ՆԱԹԱԼԻ ԵԱԶԸՃԵԱՆ

«Արցախի հոգեկոր-պատմական յուշարձանները», քարտեզ, Մայր Աթոռ Ս. Էջմիածնի հրատարակչություն, Ս. Էջմիածին, 2021 (յուշարձանները՝ Լեռնային Ղարաբաղի հնքնավար Մարզի, Արցախի Հանրապետության եւ ներկայիս գրաւեալ տարածքներու տարբերակուած գոյներով շրջաններուն մէջ) (հայերէն, ռուսերէն եւ անգլերէն առանձին տարբերակներ):

– Դանիէլեան Ժիրայր, «Մատենագիտութիւն ընդդէմ ցանկագրումի – «Լիբանանահայ գիրքը...» (յաւելում)», խմբագիր՝ Կարօ Յովհաննէսեան, հրատարակութիւն «Գեորգ Մեխիսիսեցի գրական մրցանակ»ի թիւ 102, Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսութեան տպարան, Անթիպաս-Լիբանան, 2021, 212 էջ (17 x 24 սմ.) (յաւելեալ ուղղումներ ու լրացումներ Անտոնիոս Տագետեանի ու Արմէն Իւրնէշեանի կազմած եւ 2013-ին Պէյրութի մէջ լոյս տեսած «Լիբանանահայ գիրքը 1894-2012 – Մատենագիտական ցանկ» հատորին):

– Խեչօ Մովսէս եւ Պետրոսեան Էսթեր (կազմողներ), «Յուլցակ Մաշտոցի անուան Մատենադարանի արաբերէն քրիստոնէական ձեռագրերի», խմբագիրներ՝ Անի Ժ. Աւետիսեան եւ Սիւրբան Սիւսանեան, Մեսրոպ Մաշտոցի անուան հին ձեռագրերի հիմնարկ-Մատենադարանի հրատարակչութիւն, Երեւան, 2021, 184 էջ + 8 էջ գումարող ներդիր (16,5 x 23,5 սմ.) (գիտական ընդարձակ նկարագրութիւնը Մատենադարանի արաբատառ ձեռագիրներու հաւաքածուի քրիստոնէական բովանդակութեամբ, ԺԷ.-ԺԹ. դարերու 58 ձեռագիրներու՝ Աւետարաններ, աղօթագիրքեր, մոտրումներ աստուածաբանական նկարներու շուրջ, հրաշագործութեանց պատումներ, բարոյա-խրատական աշխատութիւններ): Հրատարակուած է Մատենադարանի գիտական խորհուրդին որոշումով՝ «Ճեյ. Թի. Այ. Արմէնիա» ընկերութեան աջակցութեամբ:

– Հրաչեան Հրայր եւ Գրիգորեան Արա, «Կենսագրական բառարան – Երեւոյ եւ այսօրուան հայերը», յառաջաբանը՝ Վենսան Տիւրքէի, վերջաբանները՝ Սիշել Մարիանի եւ Ամատունի Վիրաբեանի, Kirk

Publishing, Մեզոն-Ալֆոր (Փարիզ), 2021, 700 էջ (16 x 24 սմ.) (3200 կենսագրութիւն, գումարող լուսանկարներ) (ֆրանսերէն):

– Ղազարեան Գրիգոր Աւագի, «Յուշեր եւ խոհեր հայ ժողովրդի պանծալի հերոս Անտոնիոսի մասին», «Էտիթ փրինթ» հրատարակչութիւն, Երեւան, 2021, 48 էջ (14,5 x 20 սմ.) (2օրավար Անտոնիոսի անձնական քարտուղարի յուշերն ու խոհերը 1918-1919 թուականներու անցքերուն մասին, զօրավարին, հեղինակին ու անոր գրամէքենագրուած յուշերու էջերու լուսանկարներ):

– «Մոսկուայի եւ Կարսի պայմանագիրներու ստորագրութեան 100-ամեակը եւ զանոնք չեղարկելու խնդիրները», խմբագիր՝ Մաքսիմ Ալեքսանտրովիչ Վասիլով, Մոսկուա-Երեւան, «Էտիթ փրինթ» հրատարակչութեան տպարան (Երեւան), 2021, 768 էջ (17,2 x 24,6 սմ.) (5 հայ եւ 2 ռուս հեղինակներու յօդուածներ, էջ 661-766-ը՝ 14 յաւելումներ) (ռուսերէն): Տպագրուած է ռուսահայ գործարար Լեւոն Մարկոսի Նիւթական աջակցութեամբ:

– Մարգարէտ Զաւէն, «Հայկական հարցի եւ ցեղասպանութեան մասին ուսումնասիրութիւններ եւ փաստաթուղթեր», Պէյրութ, 2021, 111 էջ (հեղինակին՝ «Հայկազեան հայագիտական հանդէս»ի եւ «Հասկ» ամսագիրին մէջ լոյս տեսած 6 յօդուած-ուսումնասիրութիւնները տուեալ նկարներուն մասին) (անգլերէն): Հատորին մեկենասն է Ռաֆֆի Մանուկեանը:

– Յակոբեան Վերա, «Մշոյ Բուլանը զաւառի հայաբնակ գիւղերն ըստ Մկրտիչ Խրիմեան կաթողիկոսին ուղղուած նամակների», Ա. գիրք, խմբագիր՝ Յակոբ Մուրատեան, Մեսրոպ Մաշտոցի անուան հին ձեռագրերի հիմնարկ-Մատենադարանի հրատարակչութիւն, Երեւան, 2021: Հրատարակուած է Մատենադարանի գիտական խորհուրդին որոշումով: Ուսումնասիրութիւնը կատարուած է Հայ օգնութեան ֆոնտի տրամադրած դրամաշնորհով, ՀՀ ԳԱԱ «Հայագիտական ուսումնասիրութիւնները ֆինանսաւորող հիմնադրամ»ի աջակցութեամբ: Հատորը նուիրուած է Մկրտիչ

Ա. Ամենայն Հայոց կաթողիկոսի յիշատակին՝ ծննդեան 200-ամեակին առթիւ:

– Չիֆթեան Գրիգոր արք., «Ուղեւորութիւն Ատրպատականի հայոց թեմում – Բ. հատոր՝ Ղարաղաղ», Դարեմ (Թարիզ), 2021, 620 էջ (Ատրպատականի վեց գաւառներու հայկական 82 երբեմնի գիւղերու պատմութեան եւ կենսագործունեութեան տարբեր կողմերու մասին համապարփակ ուսումնասիրութիւններ եւ ակաւնատեսի վկայութիւններ, անձնանուններու եւ տեղանուններու ցանկեր, լուսանկարներ): Դիմել՝ arajnordaran.tavriz@gmail.com:

– Ռուբէն, «Յուշեր – Հայաստանի անկախութեան մարտահրաւերը (1919-1920)», հայերէն թարգմանեց Վալը Տէր Միւսսեան, յառաջաբանը՝ Թալին Տէր Միւսսեանի, Thaddée հրատարակչութիւն, Փարիզ, 2021 (Ռուբէն Տէր Միւսսեանի «Հայ յեղափոխականի մը յիշատակները» շարքի 7-րդ հատորի 3-րդ մասը, խմբագրեալ Մուշեղ Աւետիսեանի եւ Անահիտ Տէր Միւսսեանի վկայութիւնները Ռուբէնի մասին, Ռուբէնի 1935-ի մէկ գրութիւնը ՀՀԴ-ի մասին, Ռուբէն Իւլպերթի վերջաբանը: Յուշերը կեդրոնացած են Հայաստանի առաջին հանրապետութիւնը թրքազերծելու Ռուբէնի քայլերուն վրայ ու կը հասնին մինչեւ 1920-ի ապրիլ ամիսը միայն) (ֆրանսերէն):

– Սարգսեան Սուրեն, «Միւսսեան Տամատեանի հրապարակախօսութիւնը», խմբագիր՝ Ալպերթ Խառատեան, «Տիր» հրատարակչութիւն, Երեւան, 2020, 350 էջ (յաւելում՝ Տամատեանի շուրջ 50 հրապարակագրական յօդուածներով, լուսանկարներ, օգտագործուած աղբիւրներու եւ գրականութեան ցանկ, ռուսերէն եւ անգլերէն ամփոփումներ, հեղինակին կենսագրութիւնը Դ. Կողքին վրայ): Հրատարակութեան երաշխաւորած է «Գլաճոր» համալսարանի գիտական խորհուրդը:

– «Փոթորիկ Կովկասի մէջ», խմբագիրներ՝ Ռուսլան Նիքոլաւիչ Փոլիսով եւ Զոնսթանդին Վլատիմիրովիչ Մաքսիմեօ, հրատարակիչ՝ Ռազմավարութեանց եւ արհեստագիտութեանց վերլուծութեան կեդրոն, Մոսկուա, 2021, 128 էջ (հայ-թրքական 2020-ի աշնանային պատերազմի պատճառներուն, պատերազմի ընթացքին ու անոր հետեւանքներուն մասին 3 հայ եւ 9 ռուսաստանցի հեղինակներու գրութիւններ՝ ռազմական, ռազմավարական եւ քաղաքական կտրուածքներով) (ռուսերէն):

## Հայկական Լուրեր

### Ազատագրական Շարժումը Պիտի Շարունակէ Յայտարարուած Նպատակներուն...

#### Սկիզբը էջ 01

Նոյեմբերի 29-ին Երևանում կրկին տեղի է ունեցել հանրահաւաք:

Հանրահաւաքների ընթացքում, Ազատագրական շարժման ներկայացուցիչները յայտնել են, որ ճանապարհների բացումը Ադրբեյջանի հետ առանց անվտանգութեան հարցի նախապէս լուծման վտանգ է ներկայացնելու Հայաստանի ժողովրդի համար:

Ազատագրական շարժումը տեղեկացնում է, որ՝

1. Շարունակելու է յայտարարուած նպատակների իրագործմանն ուղղուած գործողութիւնները, այդ թուում շարունակելու է համախմբել հայրենակիցներին Նիկոլ Փաշինեանի և Արմէն Սարգսեանի հրաժարականների պահանջների շուրջ.
2. Ազատագրական շարժումը վերկուսակցական շարժում է և պատրաստ է համագործակցելու

բոլոր քաղաքական ուժերի, հասարակական միաւորների, մասնագիտական համայնքների և անհատների հետ.

3. Շարունակելու է իրազեկման և բողոքի ակցիաները, ինչպէս նաև իրավիճակից բխող անհրաժեշտ գործողութիւնների իրականացումը:

Ըստ յայտարարութեան, Ազատագրական շարժման պատասխանատուներն են. Նայիրի Հոխիկեան-հեռուստամեկնաբան, Արա Չոհրապեան- փաստաբան, իրաւաբանական գիտութիւնների թեկնածու, Վազգէն Պետրոսեան- թրքագետ, քաղաքական մեկնաբան, Վահագն Հախալեան- իրաւապաշտպան, Անտոնիոս Մարգարեան- հանրային կառավարման մասնագետ, Գագիկ Յարութիւնեան- դերասան, Սևակ Յակոբեան- քաղաքական-հասարակական գործիչ, լրագրող, Հայկ Սահակեան- փաստաբան, և այլք: